

# ՔԵՍԱՂՑԻՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՐԷԿ, ՆՈՅՆՊԵՍ ԱՅՍՕՐ


Posted on April 8, 2014 by Keghart



Category: [Opinions](#)




## **Թորոս Թորանեան, «Նոր Յառաջ», 8 Ապրիլ 2014**

Օրերէ ի վեր, յելուզակային յարձակումի ենթարկուած է ողջ Քեսապահայութիւնը: Վանտալական այս յարձակումին զոհ չերթալու համար, մեր հայրենակիցները, անոնց մեծ մասը շնչահատ հասած են  Լաթաքիա, ուր Հայն ու տեղացին, պետութիւն ու ժողովուրդը տարագրեալները ընդունած ու ամէն միջոցի դիմած են որպէսզի տանելի պայմաններ ստեղծեն անոնց:

Ինչպէս երեկ, այսօր եւս թշնամին Լոյսն էր՝ թուրք պետութիւնը: Քեսապի Հայերը առաջին անգամը չէ, որ կ'ենթարկուին նման զինեալ յարձակումի:

## **Թորոս Թորանեան, «Նոր Յառաջ», 8 Ապրիլ 2014**

Օրերէ ի վեր, յելուզակային յարձակումի ենթարկուած է ողջ Քեսապահայութիւնը: Վանտալական այս յարձակումին զոհ չերթալու համար, մեր հայրենակիցները, անոնց մեծ մասը շնչահատ հասած են  Լաթաքիա, ուր Հայն ու տեղացին, պետութիւն ու ժողովուրդը տարագրեալները ընդունած ու ամէն միջոցի դիմած են որպէսզի տանելի պայմաններ ստեղծեն անոնց:

Ինչպէս երեկ, այսօր եւս թշնամին Լոյսն էր՝ թուրք պետութիւնը: Քեսապի Հայերը առաջին անգամը չէ, որ կ'ենթարկուին նման զինեալ յարձակումի:

Քեսապի Հայերը իրենց պապիկներէն լսած են ցաւալի պատմութիւնները 1909 թուականի Ատանայի եւ շրջակայքի ջարդերուն:

Ատանայի ջարդի ալիքը հասած էր Քեսապ, շրջան ուր դարերով ապրած են Հայերը: Յամառ ժողովուրդ է Քեսապի Հայը, փոթորիկի ժամանակ վիզը կը ծռէ, բայց փոթորիկէն ետք կը շտկէ իր իրանը որպէս պտղատու խնձորենի:

Աւելի վատ չեղա՞ւ Քեսապի հայութեան վիճակը Տեղասպանութեան տարիներուն 1915 թուականին, երբ հազարաւոր Քեսապցիներ Լահատակուեցան եաթաղանի տակ երբ մեր հայ գիւղացիք տարբեր ուղղութիւններով պարտադիր լքելով իրենց տունն ու այգին, իրենց պապերուն, սիրելիներուն գերեզմանները տարուեցան դէպի մահաստան՝ Տեր Չօրը կամ այլուր:

Փոթորիկը անցաւ դարձեալ ծանրածանր յուշեր թողելով ետին: Բայց հայ Քեսապցին, մնացորդացը, վերադարձաւ իր տունը, իր այգին, փլատակները վերականգնեց, վերակառուցեց իր դպրոցն ու եկեղեցին, ծագող արեւին դիմաց երգեց իր Առաւօտ Լուսոն, ըսելու համար աշխարհին, մենք կը մնանք ու տակաւին պիտի շատնանք:

Եթէ երեկ, կրկնակի գաղթականութեան շրջանին, քեսապցի Հայը ամէն քայլափոխի կը հանդիպէր թշնամի եաթաղանին, տարբեր է այսօր երբ հայ Քեսապցին հասաւ Լաթաքիա, ուր զինք շրջապատեցին լաւ մարդիկ՝ հայ թէ արաբ, քրիստոնեայ թէ մահմետական:

Երեկի գաղթականութեան շրջանին մենք չունէինք ոեւէ պաշտպան:

Այսօր ունինք Ազատ ու Անկախ Հայաստան, որ իր պետականութեան ձայնը բարձրացուց յանուն

Քեսապի հայրենասիրական, նոր ծայրը բարձրացավ Սուրբիոյ պետություն, նոր ծայրը Ա. Էջմիածինը ու  
Անթիլիասի կաթողիկոսությունը ու աշխարհով մեկ ցրված հայրենասիրական:

Քեսապի Հայր Գրգոր թե ինք միակ չէ, զինք ընդունող ունի, թե այս փոթորիկը եւս կ'անցնի ու  
վերստին կը բացուի տունդարձի ճամբան, իր դարաւոր սրբութիւններուն ճամբան:

Եղբերգողներ չեն մեր հայրենակիցները՝ Քեսապի Հայերը, որոնք վստահ եմ, որ այս օրերուն երգի  
պիտի վերածեն Յովհաննէս Ծիրագի մեկ բանաստեղծութիւնը եւ իրենց բոլոր ազատագրուած  
գիւղերուն մէջ պիտի երգեն.-

Մենք խաղաղ էինք մեր լեռների պէս,  
Դուք հողմերի պէս խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դէմ ելանք մեր լեռների պէս,  
Դուք հողմերի պէս խուժեցիք վայրագ:

Բայց մենք յաւերժ ենք մեր լեռների պէս,  
Դուք հողմերի պէս կը կորչէք վայրագ:

Այս դաժան օրերուն այս է ոչ միայն Հայուն նախագագոււմը, այլ հաւատքը՝ որ Վարուժանէն կուգայ.-  
որ գալիք գարուններու ոտնաձայները կը լսէ:

Քեսապին արդէն կը զգայ ծաղկող նշենիներուն բուրմունքը:

Այո՛, Քեսապի հայրենիքը միակ չէ՛:

